

ԱՐՇԱՆՈՅՍ ԱՐԱՐՏԵԱՆ

Հատը 3 մեծալիք Իզմիրի մէջ

ԿԸ ՀՐԵՏԱՐԱՐՈՒԹ ԶՈՐԵՔԱՐԹԻ ՆԻ ԶԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Դուրսերը 4 մեծալիք Հատը

Յ. Պ. ՄԱՐԿԱՆԻ

Համարատու — Տնօրէն

Տ Ա Ր Ե Դ Ի Ն Կ Ա Ն Խ Ի Կ

ԻԶՄԻՐ Օսմ. ոսկի 1
ԴՈՒՐԱՐ Մէճիտիէ 6
ՕՏԱՐ ԵՐԿԻՐ Ձրանք 25

Ծ Ա Ն Ո Ւ Յ Ա Դ Ի Ն

5 զրուշ տղը ՄԻԿԱՆԻ
2 զրուշ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՍ
60 փարա ԵՐԵՐ ԱՆԳԱՍ

Չ. Գ. ՊԱՐԱՐԱՆԻ

Հիմնադիր

Խ. ԴԵՐԶԱՆԻԱՆ, Կը տնօրինէ բաժանորդագրութեան եւ ծանուցման վե-
րաբերալ բոլոր գործերը: Բուլղիէ-Պէտքեմէն

Որ եւ է գրութիւն, յօդուած կամ նամակ, որ ուղղակի ՏՆՕՐԻՆՈՒԹԻԱՆ
կը վերաբերի, տնօրէնին կը ղրկուի: Սէպտեմբր 17

ԻԶՄԻՐ

Զորքաւարձի, 5/17 Հոկտ.

ԵՐԿՈՒՅԱՐԹ

Երկրաշարժի ցնցումներն ուսան
անցեալ չորեքշաբթի օրէն 'ի վեր
Արշիպետագոսի քանի մը եղերց
վրայ, և անընդհատ կը շարուն-
անկեն գրեթէ ութ օրէն 'ի վեր:
Երկրաշարժի կէսօրը գրեթէ չորս
ժամ անցած կրկին սաստիկ և
անցեալ չորեքշաբթի օրուանէն
աւելի երկարատե ցնցում մը տե-
ղի ունեցաւ, և այդ օրէն 'ի վեր
մերթ քնդ մերթ թէ գիշեր և
ցորեկ ցնցումներն անապակաւ են
աւելի կամ նուազ զօրութեամբ
և տևողութեամբ:

Ահաւասիկ ինչպէս կը նկարա-
գրէ, եղած վրաները, մեր վի-
լայէնի պաշտօնական լրագրիւր,
որ երէկուստ յաւելուածով, —
երէկ ժամը տասին (տարածութեա)
տեղի ունեցած երկրաշարժը ա-
մեն կողմ սաստիկ եղած է: Երբ-
ջականներէն առնուած տեղեկու-
թեանց նայելով Ուրալի և Չէչ-
մէի նահանգներէն զատ ուրիշ
տեղ ոչ չենք և ոչ անձն զննած
մը չէ պատահած: Չէչմէի մէջ
երէկ իրիկուրէն մինչև այս առա-
ւօտ ժամը 3 կարի սաստիկ ցն-
ցումներ տեղի ունեցանով, թէ
յիշեալ քաղաքը, թէ Բէիս Տէ-
րէ և Իլիալիքի և թէ Օվաճըր

գիւղակները շէնքերուն մեծ մա-
սը կործանուէր և քանդակներն
ալ վնասուէր են: Չէչմէի մէջ
չըջակայիւքն հանգերծ առ այժմ
22 հոգի մեռած և 50 հոգի
վերաւորուած են: Ուրալի մէջ ևս
շարժն անընդհատ տեղի կ'ունե-
նայ: Կիւլ Պաղէ գիւղակին մէջ
200 տուն և մէկ եկեղեցի, և
Սարը—Ապտալար գիւղակին մէջ
35 տուն կործանուէր են: Այս եր-
կու գիւղակաց մէջ 3 հոգի մե-
ռած և 20 հոգւոյ չափ վերա-
ւորուած են:

Այս տեսակ ստիպողական պա-
րագայից մէջ, ժամանակն օրու-
շին անհրաժեշտ ըլլալով, Վսեմ
Կառավարին առանց վայրկեան
մը կարուսելու, Չէչմէ զրկեց, յա-
տուկ չորեքշաբթի, Վսեմ Սալիհ
փաշան և Զօրանոյ գտնուող ա-
ռողջապահական պաշտօնականները,
որք միտաւոր տարին պէտք եւ-
ղած դարձան: Եւ բաւական
պարտաւոր պաշար մը:

Վերջիշեալ քաղաքացի վերա-
ւորներուն ապուր և ուրիշ պէտք
եղած կերակուրները մատակա-
րարելու համար Զօրանոյէն խալ-
կին և ուրիշ հարկաւոր անօթներ
զրկուեցան:

Այս տեսակ պարագայից մէջ
հասարակութեան գոյքն, յալիւ-
տակելու յանգեցողներ պակաս
չըլլալուն համար, արկածեղց
ստացուածքը պահպանելու գի-
տաւորութեամբ, յատկապէս ու-

տիկաններ և ժամադրմանը զըր-
կուեցան Չէչմէ և Վսեմ: Այս
վերջին քաղաքը քանի վրաններ
զրկուելով, վերայէն զանազան
կողմերէն պահեստի զօրաց վրան-
ներ բերել պիտի արուին անյա-
պաղ երկաթուղիով և պիտի զըր-
կուին պէտք եղած տեղերը:

Վսեմ. Կառավարիչը ևս չորե-
քան վերադարձին սպասելով,
անմիջապէս պիտի երթայ Չէչմէ
և Վսեմ:

Առջի իրիկուն Այսքանի և Բա-
սապայի երկաթուղեաց կայարան-
ներն հասնող հեռագիրներ ծա-
նուցին թէ, նոյն օրուան երկրա-
շարժը տեղի ունեցէր է նաև
Մարտիտ, Բասապա, Սալիհի,
Մարշէհի, Այսքան, Նաղիլի,
Սարայ—Բէյ և այլն:

Մենքմէն, Պերկան, Պալքը-
մէր և այլն ցնցում եղի է, սա-
կայն ոչինչ քննու չէ:

Միտիլիէն, Սամսուն և այլ
կողմերէն հասած հեռագիրներն
ապահովիչ են, որ թէև չարժ
պատահէր է, բայց ոչինչ վնաս:

Երէկ առտու Բիսուն հեռա-
գիր մը կըսէ. «Կարի սաստիկ և
երկարատե ցնցում եղաւ հոս:
Իմացուցէք, ինչ եղաւ ձեր քա-
ղաքին մէջ»:

Անցեալ ուրբաթ իրիկուն զրոյց
եղաւ թէ, ոտակականութեան ձեռ-
քն ինկած էին Բարթան Անտ-

րէտ համալաւոր աւաղակապեան
և իր մէկ ընկերը: Սակայն իր
նոյնութիւնը տարակուսելի էր
մինչև երկուշաբթի օր: Պատ-
մուածին նայելով ամեն մանրա-
մասն քննութիւններ ըլլալէ ետեւ
ստուգուէր է, որ կալանաւորը
Բարթան Անտրէտ չէր, այլ իր
նմանը, որ կըսուէր թէ ինք
վաճառական մ'էր: Չէնք գի-
տէր սակայն թէ ոտակականութիւն
արձակեց, թէ ոչ կրկին կաս-
կածներ յառնելով: Նորանոր քն-
նութեանց կարօտութիւն զգաց-
ուեցաւ:

Տեղական թերթի մը պատմա-
ծին նայելով, Բարապուրունէն
լուրեր հասած են, իմացնող թէ
յիշեալ քաղաքին չըջակաները
քանի մը Չէչմէի կամ թէ
Չէչմէի կերպարանօք ծայրաւ-
շարագործներ երեւան ելլել են,
որք տեղւոյն հարուստներէն քա-
նի մը անձեր բռնել կուզեն ստակ
կողմերէն համար: Այս եղերու-
թեան վրայ ոչ ոք կը համարձակի
եղէր քաղաքէն դուրս ելլելու:

Կիրակի օր արեւմտի կուր մը
ժողովեցաւ Արշիպետագոսի կող-
մերը: Բանի մը սաճիկներ տե-
ղւոյն բնակչաց հետ կուր բնե-
լով, չգիտցուի ինչ պատճառաւ,
ընկովիւր, գանակ և փայտ իրենց
գերերը կատարել են այս կուրին:

Երկու կողմէ վերաւորներ չատ են
կըսուի: Ոտակականութիւնը միջա-
մտելով վերջ տուած է այս ան-
կարգութեան, որ հարկաւ բա-
պելեաց չափազանցութեան գո-
յացած էր:

Բէլ Հասան աւաղակապեան
գաղափարներ քանի մը օրէ ի վեր
սկսած է տեսնուիլ: Նիստերը տա-
կաւին կը շարունակեն, որոց վախ-
ճանին կըստանք, մեր ընթեր-
ցողաց կատարեալ ծանօթութիւն
տալու համար, զայն մանրամասն
պարագայիւր նկարագրելով:

Ներկայտուի վերջին համաճա-
րակ աստիճան նկատմամբ տեղւոյն
աղագային գործող Պատուիրակ
վնամ. Ալանեան Ստեփան փա-
շայի մատուցած տեղեկագրին
վնամ: Սրբազան Պարապուրէն օրհ-
նութեան կոնգրակ մը յղեց ի
հոգեւոր վարձատրութիւն և ի
խրատայն համայն բարեբար նուր-
բատուաց և անձնուէր վաստա-
կաւորաց, որք պարագլուխ ու-
նեցողով զվնամ. Ստեփան փաշա-
նոյն համաճարակ աստիճան ասան
նուիրատուութեամբ և աշխատու-
թեամբ օգնած էին կարօտեղց և
ախտացեղց:

Մախ

ՄԵԿԵՆՈՒԹԻԻՆ ՄԱՅՏԱՅԻ

Ի Պ. ԳԻՐԳՈՒ ԶԻՆԿԻՐԵԱՆԻ

Առանց նպատակի տարիւր
գաղափարութեան հետ եղ-
բայր ըլլալ է:

ՏԻԿԻՆ ՏԻԽԱՐ

Երբ հարկը պահանջէ պէտք է
խախտել, ոչ թէ խօսած լինելու
այլ ճշմարտութիւն մը ապա-
ցուցանելու համար:

ԻՄԱՍՏՆՈՅ ՈՒԻՆ

Սկսինք ուրեմն խօսելու քանի
որ հարկը կը պահանջէ, և խո-
նարհաբար հարցնենք Պ. Չիլին-
կերեանի թէ ինչ հարկէ ստիպ-
եալ պատուական Մասիսի հինգ
թերթերու թերթիները լեցուց-
նան, մեր կարողութեան համե-
մատ հասկնալով Մայտայի մեկ-
նիլին լեզուն, բայց այնմ հրա-
պարակ կը համենք, ուստի ներ-
ուր մեզ ինքն զայն սխալ կամ
լաւ ևս մեկնիլին հասկացողու-
թեան հակառակ բնութեան խո-
սած լինենք:

Ի գիւրութիւն ընթերցողաց Պ.
Դրի. Չիլինկերեանի աչքի զար-
նող խօսքերը չակերտներու մէջ
օրինակելով մեր տեսութիւնները
կը գրենք:

Արդ, ինչ քննէ:

«Յառաջդիմութեան և հետե-
ւաբար լուսաւորութեան նկատ-
մամբ». — Այս խօսքին շատ կը-
յարմարի սա հարցումն. հաւը
հաւկիթէն կ'եղէ թէ հաւկիթը
հաւէն:

«Թղթիկ միտքեր». — արդեօք
կարճամիտ բնւ կուզէ:

«Ներքինի սիրտեր». — Միշտ
խոնարհաբար կը հարցնենք Պ. Չի-
լինկերեանի թէ «ներքինի սիր-
տերով» ինչ քարոզել կ'ուզէ. երբ
և ո՞ր տեսած է «ներքինի սիր-
տերու» հակառակ գրութիւն և
կազմուածք ունեցող սիրտեր...

Բազմաճմուռ մեկնիլին իրա-
ւունք մը ունի բնւոր որ ժամա-
նակաւ մեր աշխարհաբարին գրե-
թէ հիմնադիրն եղող նշանաւոր
գրագէտ մը՝ զոր իրեն իր վար-
ժապետն կը նկատէր Պ. Չիլին-

կերեան, վրայ իր «Ծաղիկ» հան-
դէսն, և զոր 'ի վերջէ, 'ի գիտեմ
ինչ շարժանքներէ գրգռեալայն-
քան թշնամանք, վրայ դարձեալ
իր «Ծաղիկ», գրած էր «սիրտով
ներքինի», հետեւաբար ներքին է
բնւ «ներքինի սիրտեր». բայց
«սիրտով ներքինի» իմաստը բա-
ցայայտ է, և կը նշանակէ ան-
սիրտ, մեղաւոր Պ. Չիլինկերեանի
«ներքինի սիրտ» մեծապէս կը
տարբերի միւսէն, այսինքն սիրտ
մը որ ներքինի է, որմէ և մենք
բան մը չենք կարող հասկնալ և
կըսենք թէ անիմաստ խօսք մ'է
այն, միշտ խոնարհաբար սպասե-
լով սակայն տաղանդաւոր մեկնի-
լին բացատրութեան:

«Ճարտարութիւն». — Այս բա-
ռն ինչ նշանակութեամբ գոր-
ծած է. գեղարուեստ բնւ
կ'ուզէ արդեօք:

«Մայտան», որ Հայ գրականու-
թեան համար յեղաշրջում մ'է.
— Ուրեմն Հայ գրականութիւնն
այսօր յեղաշրջեալ է և իր հին
գրութիւնները տապալելով նոր

գրութիւն մը ստացած է Մայ-
տայի շնորհիւ. դժբաղդաբար այդ-
յեղաշրջումն իրապէս չ'տեսնեք
մինչև այս վայրկեան ուր կը գը-
րենք, և Պ. Չիլինկերեան մաղի
չափ չեղած չ'է իր հին դրութե-
ան նոյն նոյն իսկ իր Մայտայի մեկ-
նութեան մէջ:

«Ժեօրժ Ման». — Պրոստերէն
Georges Հայերէնի մէջ ժեօրժ կ'ար-
տասնուի և առանց է ի կը գըր-
ուի. արդեօք Պ. Չիլինկերեան
Հայերէն բազմադարեան արտա-
սանութիւն մը սխալ կը գտնէ,
թէ Քրանտերէն Georges' Georges
կամ Georges կ'արտասանէ. միշտ
խոնարհաբար կը խնդրենք որ
բացատրութիւն շնորհէ, որովան-
չափ պիտի պարտաւորէ զմեզ:

«Մայտան» որ գրողութեան տուաւ
մեր գրական տապալելով. —
Մեր գրականութիւնն յեղաշրջ-
ւած է թէ դրողութեան. որ կէտին
պէտք է հաւատալ. վերջնական ու-
րջում մը կ'ուզենք, փան գի այս
երկուքն ալ Պ. Չիլինկերեանն է
բայց իր մեկնութեան մէջ. իսկ

Եթէ հայերէն յեղաշրջում և դը-
ղողութեան բառերն մի և նոյն ի-
մասն ունին, թող այս կէտն ալ
մեզ սորվեցնելու շնորհ ընէ, մենք
միշտ խոնարհաբար պիտի ընդու-
նինք, իրեն ճշմարտութիւն իր
Մայտայի մեկնութեան մեկնու-
թիւնները, քանի որ Ծաղիկ խմ-
բագիրն ու թշնամանքը թարգ-
մանին պիտի լինի Մայտայի մեկ-
նութեան մեկնիլին:

«Տիկին Տիւսաբի առաջին հե-
րոտահին է (գիւլյաղնուհին), ը-
սեւ կ'ուզէ կարճեմ» Մայտա, և
երկրորդական հերոսներն ու հե-
րոտահիններն են Տիկին Միւրա,
Հերիքա, Յուրիան, Տիգրան,
Լեւոն, — կոմս մ'է Պ. Թորգոմա-
սունի»:

Ըստ մեզ Մայտայի գիւլյաղ-
նուհին է Մայտա, և գիւլյաղնու-
հին Տիգրան, իսկ միւս անձերն
պարզապէս անծինք են, վրայա-
սանութեան ինչպէս նաև թառ-
րերգութեան մէջ երկեղող ամեն
անձինք գիւլյաղնուհի տիւ-
ղոսով չ'են յարկաւոր:

(Երբեմնակէլ)

ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ

բերի տեղւոյն բազմաթիւ փոխա-
նակագրին ուղղելու տեղւոյն :

Յետադարձագրողը ամենքը մի զինի
միջոց իրարու երաշխաւոր լինելով ,
կրողը որուն որ ուղղէ յետուզումը
նոյնը զայն վճարել կտայ նախորդ
յետադարձագրողին , և այսպէս շարունակ
նախորդները , մինչև ուղղուին որնոր
վերջնական պարտի վճարել յետուզ-
ումը : Փոխանակութեան դիմելը
չեն կարող զինքն այսպէս , այն յետ-
ադարձագրողը որ յետուզումը կը վճա-
րէ և որ կը իրեն նախորդ ստորա-
գրողին , իւր յետուզումն դործու-
ղութեան ծախքը կը իրէ , եթէ այս
անտարբերութիւնը վանել կամի , յետ-
ուզումը ընելու տեղ կարէ զինքն
բարեկամաբար կամ դատաստանա-
լու երաշխաւորաց զէմ , այսինքն
նախորդ յետադարձագրողը և ուղ-
ղուին :

Կրկին փոխանակութիւնը որով
յետուզումն գործողութիւնը կը լինի ,
ուղղուին նկատմամբ՝ փոխանակա-
գրին վճարելի տեղւոյն ընթացքով
կը կարգադրի , բազմաթիւ փոխա-
նակագրին ուղղելու տեղւոյն :

Նոյնը յետադարձագրողաց նկատ-
մամբ , կը կարգադրի վճարելի տեղւոյն
ընթացքով բազմաթիւ փոխա-
նակագրին ուղղելու տեղւոյն :

ՁԵՂՈՒՄ

(Բերեալքերէն)

Վաճառականաց , վաճառողաց ,
կամ սեզանաւորաց կողմանէ , կամ
վաճառականական եղելութեանց հա-
մար ստորագրեալ փոխանակագրաց
և հրամանի տոմսակաց յարաբերեալ
բոլոր դատ յարուցումներ հինգ տարե-
էն կը ընթանան բողոքողին կամ վեր-
ջին անգամ դատաստան դիմելէ
հաջորդելով :

Եթէ դատաստանութեան դէմու-
նեցած , կամ եթէ պարտքը դատ մի
գրութեամբ ընդունուած է ընդամենը
միայն երեսուն տարեէն տեղի կու-
նենայ :

Ձեջում ընդդիմող պարտաւորը
պիտի հարկադրին երգումով հաստա-
տել , թէ ալ ոչինչ կը պարտին , ինչ-

պէս որ նոցա այլի կիները կամ ժա-
ռանգորդները թէ ուղիղ սրտիւ կը-
համարեն պարտ հունենալը :

ՊԱՐՏԱՊԱՆԱՆԱԿԱՆ

ԵՒ ՓՈԽԱՆԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐ

Ասոնք փոխանակագրի նման առ-
ուստերի արժէթուղթեր են , բայց
միևնոյն հետեւանքը չեն գոյացնել ,
որովհետև ուղղուին դործած բար-
բառէն յայտնուածին համեմատ , նա
մի փոխանակագրի յորինելու դիտա-
ւորութիւնը չէ ունեցած , այլ միայն
ձեռք անել առ ինքն պարտաւորեալ
մի գումար , կամ փոխանակութիւն
տալ մի երրորդի որ սա վճարէ , նո-
րա հաշուին համար փոխարինելու մէջ
հաշուակալ գումարը :

Փոխանակութեան թուղթը հասա-
րակօրէն ասով կը տարբերի փոխանա-
կագրէն թէ , կողմերը դերձ թողած
են կրողը ընդունելութեան և փո-
խանակագրին կիրառութիւններէն , և
որովհետև հարկաւորապէս մի վաճա-
ռականական գործառնութիւն չհիմ-
նէր , բայց երբ պարտաւորահանման
կամ փոխառութեան թուղթերը կը
պարտականին փոխանակագրին էական
պայմանքը , այսինքն տեղէ տեղ գրամ
յանձնելէ , և երբ ընդունելութեան
ներկայանայ և չի վճարուելուն համար
բողոքի , ալ չի տարբերի փոխանա-
կագրէն , նորա տրուած անուան հա-
կաւակ :

ԿՐՈՂԻՆ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿ

(Պէտէ օ գրեթէ)

Սա մի գրութիւն է , որուն վրայ
պարտատէրին անունը կրող բառով
փոխադրուած է :

Նա վճարելի է զայն չեղանցողու-
ղին , և կարէ յանձնուել առանց մի
պաշտօնական գործողութեան , նման
մի պանքայի տոմսակի կամ մի հատ
գրամի :

ՊԱՐՁ ՏՈՄՍԱԿ ԿԱՄ ԽՈՍՏԱՐԻՆԻՍ

(Պէտէ օ գրեթէ)

Պարզ տոմսակ կամ խոստմնագիրը
մասնաւոր անձինքներէ ստորագրեալ

մի գրութիւն է , որով մի անձ յանձն
կառնու որոշեալ մի գումար վճարել
մի ուրիշի պայմանագրեալ ժամանա-
կի մէջ :

Մի պարզ տոմսակ չէ կարող յետ-
ստորագրել , քանզի միայն հրամանի
տոմսակները կարին յետադարձագրել :

Մի պարզ տոմսակը յանձնելու հա-
մար , պարտ է հաստատել կողմանց
կառնող մի պաշտօնական կամ մասնա-
ւոր գրութեամբ , զոր կ'անուանին
յանձնում (սէսիօն) կամ առնելիքի
փոխադրութիւն :

Որովհետեւ այն յանձնումը արժողա-
կան լինի , այսինքն առնելիքը յանձն
առնողին , նորա վճարու մը պահան-
ջելու իրաւունքը տայ , պարտ է որ
պարտաւորը յանձնումը ընդունի և
զինքն նոր պարտատէրին պարտաւորն
ձանաչէ , մի պաշտօնագրութեան
մէջ , և կամ յանձնումն իրեն յայտա-
բարի մի ատենածուր կողմանէ :

ԷՆԸ

ԳՐԻՊՈՐ ՍԻՄՈՆԱՔԵԱՆ

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Ստորոգյ մարմնոյն է հաւասար
և ուղիղագիծ լայնատարր :
Այնք ունիմ ըրիւ անհամար ,
Մինչ զի թուել զայն չէ հնար :
Գլուս և ոտը և այլ անդամ
Ձիւ , ի թաւալ բայց կ'ընթանա :
Միայն քանզի աչքս չեն տեսնար՝
Հուտ կը դայթիմ կ'իյնամ ի վայր :
Երբ լընդամա՝ նոյն վայրիկանին
Ծնունդը յայտնացաւ դուրս կարճախոյն :
Ծնունդը յայտնացաւ դուրս կարճախոյն :
Եւ աւելի խել են , անթիւր :

Նոր ծագուկներս համբար տեսնում
Յիմարտնց քեզ կը դնում :
Սա ալ բաւմ որ ծագըս համայն
Ոչ մէկ կերպով են ինձ նման :
Ապրեալաւ են , զի երբ ծնին՝
Նոյն վայրիկանին ինձմէ խաւին :
Իրենց սիրոյն երբ զլսատուիմ՝
Հիւսկեալ լուծեալ միկտեղ կ'ապրիմ :
Սա անհոգի իմ ծագուկներ
Որքան մարդոց կեանք են փրկել :
Գուց որ ջանալու զաւարտեալ ,
Դիտելը ձեռքէ չեմ շատ հեռու ,
Ձի երբ պակսիմ՝ դուք կը ծիւրիք
Կամ վայրենեաց նման կ'ապրիք :
Պ. Ն. Մ.

ԱԶԳԱՅԻՆ

Նախորդ թուով ծանուցած է-
ինք թէ , Կէլիպօլուի Տէր Ղևոնդ-
քահանային համար տեղւոյն աղ-
գայնոց ունանց կողմանէ տրուու-
նեք եղած են :

Ըստ ատոնց , յիշեալ Տ. Ղևոնդ-
քահանային տեղւոյն դարձեալ աղ-
արդիւն վիճակի մը վերածած է ,
յիշեալ յարկին թէ Վարչութիւնն
և թէ դատաւարութիւնն բայցար-
ձակօրէն իր վրայ առնելով , և
դրեթէ առանց որ և է աղգային
իշխանութեան մը հաւանութեան
իր քմաց համաձայն չինած ծրա-
դրով մը կառավարելով , և թէ ,
մինչեւ ինք գաղղիքէն լեզուին
հաղիւ նախնական ծանօթութիւն-
ներն ունի , դաղղիքէն դատա-
խօսել կը յաւակնի , առանց կա-
րենաւոր ոչ ինչ ուսուցանել , պար-
զապէս ամաական դիզելու նպա-
տակաւ :

Երկրորդ , Տէր Ղևոնդ քահա-
նային բարուց և վարուց վրայ ևս
աննպաստ կերպով կը գրեն մեզ
յիշեալ քաղաքէն : Մենք կը
պարտաւորինք հոս արձանագրել ,
առանց պիտեալ ատոնց ճշմար-
տութեան վրայ , որպէս զի ձեռն-
հաս իշխանութիւնը իրաց վիճակը
քննել և ստուգելով , հարկ եղա-
ծը անօրինակ :

Տէր Ղևոնդ քահանային կըսեն
մեր լրատուք , թո՛ղ որ ամեն ժա-
մանակ արքեպիսկոս սովորութիւն
ունի , այլ նաեւ իր այդ սովորու-
թիւնը ի տես հասարակութեան
ի գործ կը դնէ , զինքնանց մէջ
և այդ միջոցին ոչ թէ իր նուի-
րական և պատկառելի կարգին ,
այլ նաեւ հասարակ անհատի մը
անգամ անվայել գրեց մէջ կ'իյ-
նայ :

ԹԵՐԹՈՆ

ԱՐՇԱԼՈՅՍ

ԳԱԼԱՄԱՐԻ ԵՒ ՕՐԱՄԱՐԻ ՄԱՀԸ

(Նախորդ Թիւէն շար.)

Գալամար և Օրա կը թողուն քա-
ջերուն վայրը և իրենց քայլերը
դէպի Լօքլինի դաշնող կողմն :
Կարնիին չի չնախադր լըյան աղօտ
կը վառի զիւրերուն մէջ , հիւսիս-
սային ատոյն դէպի Թուրա իրենց
չաւիղը կ'առաջնորդէ : Սուարան
բաւարական իր ընդարձակ բլուրին
վրայ կը հանգչի : Հոս գունդու-
րը խանած են , քունի մէջ կը-
խորդան անոնք և Վահանին դը-
խերուն տակ են : Իրենց սուրե-
րը հեռաւորութեան մէջ գիղ-
ուած կը չողան : Խարոյկները
մարած են : Հրոյ կայծերն միև-
րին մէջ կը կորսուին , Խորին լը-
ուութիւն մը կը տիրէ , բայց ա-
լիքները կը մանչեն աղաւտածին
բաղնիքով : Մեղիկ կը յառաջնան
մեր քաջերն ննջող գունդին մէ-
ջ : Ճամբուն կէսն անցած է ,
երբ Մաթնի իր վահանին վրայ
հանդիմած ժամանակ Օրալի ա-
չաց կը հանդպի : Հօր կը յայ-
տեն աչերը , փայլակի նման կը-
ցլան անոնք մութին մէջ և Վեր
առաւ սուրը Օրալ « Ինչո՞ւ կը
գեղեցիս Օրիթնայի գլխաւոր ,
գոչեց Գալամար , թշնամոյն մէջ

ենք , տատամնելով ժամանակ
է , » վրէժնի գրութեան ժամ է ,
գոչեց ուսուցերն Օրալ , Լօքլինի
քաջը Մաթնի կը ննջէ , կը տես-
նեն իր սուրը , ծայրը հօր ար-
եամբ ներկուած է , Մաթնի
արեւը իմ որոյս վրայ պիտի
միտայ , բայց պէ՛տք եմ զինք
ննջած ժամանակ սպաննել , որ-
դիք Մորայի : Ո՛հ , ինք պէտք է
զգայ իր վէրքը և համբաւ պէտք
չէ անհետիլ ննջողի մը արեան
մէջ : Արթնցիկ , Մաթնի , ար-
թնցիկ . Գալամար որդին քեզ կը
կոչէ , կեանքդ իր ձեռնաց մէջն
է , արթնցիկ դիմաւորելու : Մա-
թնի կը լսուի բռնէ . բայց ինք
միայն արթնցաւ , ոչ բոլոր ցե-
ղապետներն կանգնեցան դատին
վրայ : « Փախէ Գալամար , փախէ
գոչեց սեւահերն Օրալ , Մաթնի
իմ որոյս է , զուարթ պիտի մեռ-
նիմ , Լօքլին չորս կողմն կը պա-
շարէ , փախէ՛ գիշերուան մու-
թին մէջ » : Օրալ կը դառնայ :
Մաթնի սաղաւարտը կը ճեղքի
Վահանը ձեռքէն կ'իյնայ , կ'սո-
ղայ նա իր արեան մէջ , թաւա-
լաղը կ'ընկնի կարնիին ներքեւ :
Սթրումն կը տեսնէ նորա ան-
կումը : Իր զայրոյթը կը բորբո-
քի : Իր զէնքը կը չողայ Օրալի
գլխուն վրայ , բայց սուր մը իր
սպաց մէջ կը մնայ : Ուղեղը
ստատկութեամբ վերքին մէջ կը-
հասի և կը փրկի Գալամարի սու-
րին վրայ : Ինչպէս ուղեւորու ա-

լիքներն դիմելով կը բաղնին
հիւսիսային երկու նաւերու , նոյն-
պէս Լօքլինի որդեաց վրայ կը-
յարձակէին քաջերն : Ինչպէս ա-
լիքներու իրիւրը ճեղքելով
հարստութեամբ կը յառաջանան
հիւսիսի նաւերը՝ նոյնպէս Մոր-
վէն քաջերը յաղթական կը սի-
գային ցրուած սաղաւարտներու
վրայ :

Ենթերու շառաչուք միևնա-
լի ականջին կը հասնի : Կը բաղ-
նէ իր վահանը : Ամբար կ'ար-
ձակի մացառու վայրին մէջ Լի-
նօ ուրախութեամբ կը ցատկէ :
Օտարն կը սիգայ իր զէնքերով :
Օսքար կը շարժէ իր սուրը , Ֆիլ-
լանի արագաշարժ թուրն կը տա-
րաբերի օդին մէջ : Սուրայի է
մահաւան հարուածն : Շատ են
Լօքլինի այրիներն : Մորվէն հուսկ
ուրեմն կը յաղթանակէ :

Առաւօտը կերելի բլրին վրայ ,
կենդանի ոտի մը չդառնալով ,
բայց ննջողները շատ են : Խոթո-
կը տարածին անոնք Լեյնի վը-
րայ : Ուղեւորու դիմելուն իրենց
մաղերը կը շարժէ , սակայն չեն
արթնարար անոնք : Բողբոյնը
բարձրէն իրենց որսերու համար
կը ճչեն : Որո՞ւ խաբաւալ վար-
սերն են անոնք որ կը ծածանին
դիւցաղնի մը կուրծքին վրայ ,
պայծառ , ուղեւոր նման : Անոնք
իր բարեկամին սեւա մաղերուն
հետ կը խառնուին . Գալամարն է

Ինչպէս կը տեսնուի , այս փոք-
րիկ պատմութիւնն իր ծանրա-
կշռութիւնն և ուշադրութիւն
գրաւող յատկութիւնն ունի :

Նախ , Կեղերոնական ուսումնա-
կան խորհրդոյ համար , քանի որ
իրեն այսքան մօտիկ քաղաքի
մը մէջ իր ընդհանուր ծրագրին
բողբոյն հակառակ և իր բարձ-
րագոյն իշխանութեան արժանա-
պատուութեան արատ բերող
զեղծումներ տեղի կուենան :

Երկրորդ , աղգային կեղերոնա-
կան վարչութեան և մասնաւոր
կրեական ժողովոյ համար , քանի
որ դաւառաց մէջ առաջնորդա-
կան և կրեական իշխանութեանց
նոր կազմակերպութիւն մը տա-
լու , կամ արդէն դառնաւ կազ-
մակերպութեան մեռելալ կիճակին
գարման տանելու պէտքին առջև
գտնուած իլլինի , այս զեղծում
ներուն դէմ : Գիտեն աղգային
իշխանութիւնը որ այս տեսակ
իրողութիւնը նարդեպ չեն , և
սակայն այսօր կ'արձանագրուին և
վաղը կը մոռցուին դժբաղդարար

Երրորդ , վերջապէս այն ամեն
անհատից համար , որը նախան-
ձակներն են իրենց աղգային
դատարարութեան , կրօնից և
պատուոյն համար , քանի որ ան-
հատներն են աղգը կազմող տար-
րը , և աղգին եղած փլատ կամ
վտանգ՝ ամեն անհատի եղած
փլատ և վտանգ կրնանք համա-
րել առանց չափազանցօրէն խօ-
սած ըլլալու :

ճուկ քնակարանը ցոյց կուտան ,
երբ Սուարան գերի ինկաւ՝ մեր
սուազատտները պարզեցան կո-
հակներու վրայ , հովերը մեր նա-
ւերը դէպ ՚ի Մորվէն յառաջա-
ցուցին : Երգիչները տաղերը բա-
կըսան . —

« Ի՞նչ կերպարան է որ դէպ
'ի ամպերու գոռումը կը վերա-
նայ : Որո՞ւ մթին ոգին է այն ,
որ փոթորկաց մթին փայլակե-
րու մէջ կը ծածանի : Իր ձայ-
նը կայծակի նման կը թաւալի :
Օրալն է այն , Օրիթնայի խոթո-
ւադէմ ցեղապետն : Անգո՞յգ էր
մարտի մէջ և Խաղաղութիւն ու-
ւոյդ , Օրալ , համբաւը պիտի
չ'անհետի , նոյնպէս քուկդ Գալ-
մար , քաղցը էր դու , որդիդ
կապուտաչեայ Մորայի , բայց
սկար չէր սուրդ մարտի մէջ , ա-
նիկայ հիմայ անձաւիդ մէջ կը
կախուի : Լօքլինի որդիք անոր
պղծաբան շարժը կը հնչեն : Լը-
սէ՛ դովեստդ Գալմար , զօրա-
ւորներու բերնէ կը հնչի այն :
Անունդ Մորվէնի արձագանքնե-
րու վրայ պիտի տարուբերի Վեր
ա՛ռ ուրեմն գեղեցիկ մաղերդ
որդիդ Մորայի , տարածէ զա-
նոնք ծիւղածնի կամարին վրայ
և ծիւղածնի փոթորկին արցունք-
ներու մէջ :

Թարգ. Լորտ Պայրնէ

Պ. ՆՇԱՆ ՄԻՐՁԱ

արյուժաք - Ի. Տ. Եղեանի տի
հօգնէ - Լէ. Միշէլ
որդիդոս - Թ. Զօֆ. Ռէտիս
էքքերա - Սթ. Միքքուտաքիս
օչ - Ք. Եանտուրիս
արտանէլ - Օսքար Միսիբ
ալիմոս - Մանկլիս Լ Ընկ.
իւեսոս - Ալէք. Եսայորույօ